

**«Ներքին հիվանդություններ» (ռեաբիլիտոլոգիա և սպորտային բժշկություն)
մասնագիտությամբ հետազոտողի որակավորման քննության
ՀԱՐՑԱՇԱՐ**

1. Հարմարվողականություն և զարգացման մեխանիզմներ: Հարմարվողականության ինքնակարգավորում և սանոզենեզի մեխանիզմներ:
2. Ստրեսի և հարմարվողականության դերը ռեաբիլիտացիայի մեջ:
3. Ռեաբիլիտալոգիայի ֆիզիկական գործոնների ազդեցությունը մարդու ծերացման գործընթացի վրա:
4. Առողջության ախտորոշում, առողջություն և հիվանդություն:
5. Նյարդային համակարգի դերը տարբեր ֆունկցիանների կարգավորման մեջ (նեյրոկրին, նեյրոէնդոկրին ազդեցություն, պեպտիդերգիկ նյարդային համակարգ): Իմունային համակարգ:
6. Ֆունկցիոնալ համակարգերի ախտաբանական ֆիզիոլոգիա: Պատոգենեզի և տարբեր սոմատիկ հիվանդությունների զարգացման ժամանակակից ներկայացումը:
7. Ռեաբիլիտալոգիայի սկզբունքները, խնդիրները, նպատակները: Ռեաբիլիտացիոն թիմի կազմը և աշխատանքային առանձնահատկությունները:
8. Ռեաբիլիտացիոն մեթոդների դասակարգում և նրանց նշանակությունը վերականգման մեջ:
9. Բուժական ֆիզկուլտուրայի (ԲՖ) նպատակը, խնդիրները և բովանդակությունը: ԲՖ կապը թերապիայի, վիրաբուժության, գինեկոլոգիայի և միուս մասնագիտությունների հետ:
10. Ընդհանուր և հատուկ մարզումներ, ֆիզիկական վարժությունների ազդեցության ճանապարհները:
11. ԲՖ սրտանոթային հիվանդությունների ժամանակ, հակացուցումներ:
12. ԲՖ անոթային խնդիրների ժամանակ, ԲՖ փուլայնությունը ինֆարկտով հիվանդների մոտ:
13. ԲՖ նշանակման սկզբունքները սրտի ինֆարկտի վաղ, հիվանդանոցային և հետհիվանդանոցային (սանատոր-կուրորտական) փուլերում:
14. ԲՖ շնչարական համակարգի հիվանդությունների ժամանակ, հակացուցումներ:
15. ԲՖ մարտոդական համակարգի հիվանդությունների ժամանակ, հակացուցումներ:
16. ԲՖ առանձնահատկությունները նյութափոխանակության խանգարման հիվանդությունների ժամանակ՝ ճառագայում, պոդագրա:
17. ԲՖ առանձնահատկությունները շաքարային դիաբետի ժամանակ:
18. ԲՖ կիրառումը ողնաշարային և հոդային հիվանդությունների ժամանակ, հակացուցումներ:
19. ԲՖ առանձնահատկությունները ռևմատիզմի և ռևմատոիդ արտրիտի ժամանակ: Աշխատանքային ռեաբիլիտացիայի կազմակերպում:
20. Հենաշարժիչ ապարատի վնասվածքների և դեֆորմացիանների վերականգնողական բուժման սկզբունքները: ԲՖ և մերսման կիրառումը այդ պաթոլոգիանների ժամանակ:
21. Կենթվացքի խանգարումներ, կանխարգելում և ռեաբիլիտացիոն բուժում:
22. Սկոլիոզ, ախտաբանական կիֆոզ և լորդոզ, ռեաբիլիտացիայի սկզբունքները և կիրառվող մեթոդները:
23. ԲՖ կիրառման ցուցումներ և հակացուցումներ հետվիրահարական շրջանում:

24. ԲՖ կիրառման սկզբունքները երեխանների մոտ տարբեր հիվանդությունների ժամանակ: Ինչպես է ազդում ԲՖ երեխանների օրգանիզմի վրա տարբեր հիվանդությունների ընթացքում:
25. Նեյրոռեաբիլիտացիայի սկզբունքները, կիրառման մեթոդները, ցուցումներ և հակացուցումներ, արդյունավետություն:
26. Ռեաբիլիտացիայի սկզբունքները ինսուլտով հիվանդների մոտ: Մեթոդների կիրառում, վերականգման ժամկետներ և արդյունավետության գնահատում:
27. Կլիմատոթերապիայի հիմնական սկզբունքները: Բուժական հանքային ջրերի օգտագործումը տարբեր հիվանդությունների ժամանակ:
28. Բուժական ցեխեր: Բնորոշումը, բուժական ցեխերի ֆիզիկական և քիմիական բնութագրում:
29. Ջրաբուժություն: Ջրաբուժության հիմնական սկզբունքները, ազդող գործոնները և մեխանիզմները: Ֆիզիոլոգիական և ախտաբանական վիճակները, որոնք կարող են առաջանալ ջրաբուժության ընթացքում, բժշկի գործելակերպը: Ընդհանուր ցուցումներ և հակացուցումներ:
30. Հիդրոթերապիա: Սահմանում, ջրի ֆիզիկական հատկությունները: Ջերմային և մեխանիկական բաղադրիչ: Սարը և տաք ջրի ազդեցության մեխանիզմները մարդու վրա: Ցուցումներ և հակացուցումներ:
31. Ցնցուղներ և լոզանքներ, ազդեցության մեխանիզմ, ցուցումներ և հակացուցումներ, տեսակներ և կիրառման առանձնահատկություններ:
32. Մերսում, ազդեցության մեխանիզմներ, ցուցումներ և հակացուցումներ: Մերսման տեսակներ և նրանց կիրառումը տարբեր հիվանդությունների ժամանակ: Մերսման տեխնիկան:
33. Էլեկտրոթերապիա: Սահմանում, կիրառվող գործոններ:
34. Գալվանիզացիա և դեղորայքային էլեկտրոֆորեզ, կիրառման մեթոդիկա, հիմնական ցուցումներ և հակացուցումներ, անվտանգության կանոններ:
35. Էլեկտրոախտորոշում և էլեկտրոստիմուլյացիա: Կիրառման մեթոդիկա, հիմնական ցուցումներ և հակացուցումներ:
36. Ամպլիպուլսոթերապիա: Սահմանում, կիրառման մեթոդիկա, հիմնական ցուցումներ և հակացուցումներ, տարբեր մեթոդների հետ համատեղելիության առանձնահատկությունները, անվտանգության կանոններ:
37. Էլեկտրոմագնիսական դաշտ: Բարձր հաճախականության էլեկտրոմագնիսական դաշտ:
38. Դարսոնվալիզացիա, սահմանում, կիրառման մեթոդիկա, հիմնական ցուցումներ և հակացուցումներ:
39. ՈւՋԹ, բուժական ազդեցություն, կիրառման մեթոդիկա, հիմնական ցուցումներ և հակացուցումներ:
40. Հոգեբանական և սոցիալական ռեաբիլիտացիայի սկզբունքները և նպատակները:
41. Առաջնային ռեաբիլիտացիայի սկզբունքները: Ռիսկի գործոնների կոնցեպցիա:
42. Մետաբոլիք համախտանիշի ռեաբիլիտացիայի սկզբունքները և կիրառման մեթոդները:
43. Հիպոկինեզիայի և հիպերկինեզիայի դերը հիվանդության զարգացման մեջ:
44. Ֆիզիկական զարգացման գնահատում ստանդարտների, ինդեքսների և կոռեկցիոն մեթոդների օգնությամբ:
45. Տարբեր հիվանդությունների ընթացքում ռեաբիլիտացիոն ծրագրերի կազմում, սկզբունքներ և ալգորիտներ:

46. Տարբեր ռեաբիլիտացիոն մեթոդների համատեղելիության առանձնահատկությունները:
47. Ռեաբիլիտացիան ինչպես համալիր վերականգնողական բուժում:
48. Սպորտային բժշկության բովանդակությունը, նպատակները և խնդիրները: Սպորտային բժշկության հիմնական բաղադրամասերը: Սպորտային բժշկությունը՝ ինչպես առողջապահության կարևոր բաղադրամաս:
49. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ազդեցությունը մարդու ֆունկցիոնալ վիճակի վրա:
50. Մարզիկների ֆիզիկական զարգացումը և մարմնակազմությունը: Օրգանիզմի ֆիզիկական զարգացման վրա ազդող գործոնները: Մարդու տարիքային ֆիզիկական զարգացման դինամիկան: Տարբեր սպորտաձևերի ազդեցությունը ֆիզիկական զարգացման ցուցանիշների վրա:
51. Մարզիկների ֆիզիկական զարգացման հետազոտման և գնահատման ժամանակակից մեթոդները:
52. Մարզիկների մարմնակազմության տեսակները: Մարզիկների կեցվածքը և կեցվածքի հիմնական խանգարումները: Կեցվածքի առանձնահատկությունների վիզուալ և գործիքային ախտորոշում: Տարբեր մարզաձևերի ազդեցությունը կեցվածքի կազմավորման վրա:
53. Մարզիկների հենաշարժիչ և ոսկրահոդակապանային համակարգերի զարգացման առանձնահատկությունները և փոփոխությունները: ՖԿ և սպորտի ազդեցությունը մարզիկների մկանային համակարգի զարգացման վրա:
54. Մարզիկների նյարդային և նյարդամկանային համակարգերի ֆունկցիոնալ վիճակը: Նյարդային համակարգ և մարզման գործընթաց: Մարզման ընթացքում նյարդային գործունեության տարբեր ֆիզիկական հատկանիշների համեմատական վերլուծությունը:
55. Ստատիկ և դինամիկ համակարգում և նրանց ցուցանիշները: Մարզիկների տարբեր զգայարանների գործունեության առանձնահատկությունները:
56. Սպորտային գործունեության ընթացքում սրտանոտային համակարգը, ինչպես թթվածնի տեղափոխությունը սահմանափակող օղակ:
57. Սպորտային սրտի կառուցվածքային առանձնահատկությունները: Մարզիկների սրտի հիպերտրոֆիկ փոփոխություններ:
58. Սրտային գործունեության կոնտմետրիկ սկզբունքը և դրա իրականացումը մարզիկների մոտ հանգիստ վիճակում և ֆիզիկական ծանրաբեռնվածության ժամանակ՝ կախված մարզվածության աստիճանից:
59. Մարզիկների մոտ անոթային համակարգի ֆունկցիոնալ վիճակի առանձնահատկությունները:
60. Մարզիկների մոտ կարդիոռեսպիրատոր համակարգի ֆունկցիոնալ վիճակի առանձնահատկությունները: Թոքային ծավալ և ծավալի փոփոխությունները հանգիստ ժամանակ և ֆիզիկական ծանրաբեռնվածության ընթացքում:
61. Սպորտում կիրառվող շնչառական համակարգի ֆունկցիոնալ փոքրեր:
62. Մարզիկների մարսողական համակարգի ֆունկցիոնալ վիճակը:
63. Մարզիկների մոտ կատարվող մեզի փոփոխությունները: Միոգլոբինուրիա: Աղաջրային հաշվեկշռի առանձնահատկությունները տարբեր սպորտաձևերում: Արյան փոփոխությունները հանգիստ վիճակում և մկանային ակտիվության ժամանակ:

64. Տարբեր սպորտաձևերում մարզիկների ֆունկցիոնալ վիճակի առանձնահատկությունները և ֆիզիկական որակների զարգացումը: Ոչ ճիշտ և ոչ ռացիոնալ մարզումների հետևանքով առաջացած մարզիկների ֆունկցիոնալ վիճակի խախտում և վատացում:
65. Բժշկական հսկողության սկզբունքները տարբեր սեռի և տարիքի մարզիկների մոտ: Կին մարզիկների բժշկական հսկողության առանձնահատկությունները:
66. ՖԿ և սպորտով պարապող երեխանների բժշկական հսկողության հիմնական սկզբունքները և առանձնահատկությունները: Տարիքային խմբեր և նրանց առանձնահատկությունները:
67. Միջին տարիքի և տարեց մարդկանց կենսաբանական առանձնահատկությունները: Ծերացման տեսության հիմնական սկզբունքները:
68. ՖԿ և սպորտի կարևոր կանխարգելիչ ազդեցությունը: Միջին տարիքի և տարեց մարդկանց բժշկական հսկողության առանձնահատկությունները:
69. Մարզիկների ֆիզիկական աշխատունակության և ֆունկցիոնալ պատրաստվածության գնահատում:
70. Ֆիզիկական և ֆունկցիոնալ տեսթավորում սպորտային բժշկության մեջ և այդ տեսթավորման հանդեպ ունեցած պահանջները: Տեսթավորման արդյունքների քանակական և որակական գնահատում:
71. Ֆիզիկական աշխատունակություն հասկացողությունը: Մարդու աերոբ (թթվածինայի) աշխատունակություն:
72. Մաքսիմալ և սուբմաքսիմալ փորձեր, որոնք օգտագործվում են ֆիզիկական աշխատունակության գնահատման համար:
73. Բժշկական հսկողություն մարզումների և մրցումների ժամանակ: Օրգանիզմի ֆունկցիոնալ վիճակի փոփոխությունները մարզումների ժամանակ:
74. Նախամարզանքի շրջանում սրտանոթային, շնչառական, նյարդային համակարգերի և արյան ցուցանիշների փոփոխությունները:
75. Հիմնական կամ մրցումայի շրջանում սրտանոթային, շնչառական, նյարդային համակարգերի և արյան ցուցանիշների փոփոխությունները:
76. Սպորտային վիճակ հասկացողությունը: Սպորտային վիճակի պահպանում և գերմարզվածություն:
77. Բժշկական ապահովածությունը և հսկողությունը մրցումների ժամանակ: Մրցումների ժամանակ բժշկի պարտականությունները և իրավունքները: Մրցումների սանիտարահիգիենիկ նորմերի ապահովում:
78. Տարբեր կլիմայական, ջերմաստիճանային, ժամանակային պայմաններում մրցումների անցկացման առանձնահատկությունները:
79. Ակլիմատիզացիա բարձրադիր կլիմայական գոտիներում: Ռեակլիմատիզացիա և նրա ազդեցությունը մարզիկի աշխատունակության վրա:
80. Դոպինգ և հակադոպինգային հսկողություն մրցումների ընթացքում: Դոպինգ հասկացողություն:
81. Դոպինգ համարվող նյութերի դասակարգում: Հակադոպինգային հսկողության կազմակերպում ՀՀ:
82. Հակադոպինգային հսկողության անցկացման կանոնակարգ:
83. Մրցումների ժամանակ հակադոպինգային հսկողության անցկացման պրոցեդուրան: Կիրառվող պատժամիջոցները:

84. Բժշկական միջոցներ, որոնք կիրառվում են մարզիկների մոտ աշխատունակության վերականգման համար:
85. Սպորտում կիրառվող դեղամիջոցներ, նրանց բնութագիրը, ազդեցության մեխանիզմները, ցուցումները և հակացուցումները:
86. Մնդակարգ և վիտամինների ընդունում սպորտում: Ռացիոնալ սննդակարգի նշանակությունը մարզիկի աշխատունակությունը վերականգնելու համար: Համալիր դեղամիջոցների և առանձին վիտամինների օգտագործումը մարզումների տարբեր փուլերում:
87. Մարզիկի վերականգման և աշխատունակության բարձրացման համար կիրառվող ֆիզիկական գործոնները՝ սպորտային մերսում:
88. Մերսման ազդեցության մեխանիզմները: Տեղային, դասական, սեզմենտար մերսում: Վիբրոմերսում, հիդրոմերսում, բարոմերսում:
89. Մարզիկի վերականգման և աշխատունակության բարձրացման համար կիրառվող ֆիզիկական գործոնները՝ ապարատային ֆիզիոթերապիա:
90. Մարզիկի վերականգման և աշխատունակության բարձրացման համար կիրառվող ֆիզիկական գործոնները՝ ջրաբուժություն:
91. Մարզիկի վերականգման և աշխատունակության բարձրացման համար կիրառվող ֆիզիկական գործոնները՝ ռեֆլեկտոթերապիա և բալնոթերապիա:
92. Սպորտային պատույզիա: Սպորտային հիվանդությունների և վնասվածքների դասակարգում:
93. Տարբեր սպորտաձևերի ազդեցությունը հիվանդությունների և վնասվածքների զարգացման վրա: Հիվանդության ընթացքը մարզիկների մոտ:
94. Սպորտային վնասվածքներ, նրանց առաջացման պատճառները և դասակարգումը:
95. Գերլարվածություն և գերմարզվածություն, զարգացման պատճառները մարզիկների մոտ: Քրոնիկ ինֆեկցիոն օջախի և մարզումների դերը գերլարվածության և գերմարզվածության զարգացման մեջ:
96. Գերմարզվածության հատկանիշները, զարգացման փուլերը, կանխարգելումը և բուժումը:
97. Սուր և քրոնիկ գերլարվածություն՝ հատկանիշները, զարգացման պատճառները, կանխարգելումը և բուժումը:
98. Սուր ախտաբանական վիճակներ՝ ուշագնացություն, կոմատոզ վիճակ: Ուշագնացության զարգացման մեխանիզմները մարզիկների մոտ, նրանց կանխարգելումը և բուժումը:
99. Արևային և ջերմային հարված, կլինիկա, կանխարգելում, բուժում:
100. Հիպոգլիկեմիկ վիճակներ մարզիկների մոտ, զարգացման մեխանիզմներ, կանխարգելումը և բուժումը: Կետոնային հիվանդություն զարգացման մեխանիզմներ, կանխարգելումը և բուժումը:
101. Մարզիկների մոտ ռեաբիլիտացիայի սկզբունքները տարբեր հիվանդությունների, վնասվածքների և ախտաբանական վիճակների ժամանակ: Մարզիկների վերականգման ժամկետները տարբեր հիվանդություններից հետո:
102. Սպորտային ռեաբիլիտացիայի խնդիրները և նպատակները: Ֆիզիկական ակտիվության դերը մարզիկների վերականգման մեջ: Բուժական ֆիզկուլտուրա և սպորտային ռեաբիլիտացիա:

Գրականության ցանկ

1. Գրաեվսկայա Ն.Դ., Դովլատովա Տ.Ի., Սպորտային բժշկություն, Դասախոսությունների և գործնական պարապունքների հավաքածու, 2004, 2 հատոր
2. Դիդոբ Մ.Դ. Կոնաշնյա Ա.Վ. Ռեաբիլիտացիայի հիմունքները, Ձեռնարկ, 2008, 34 էջ
3. Եպիֆանով Վ.Ա., Վերականգնողական բժշկություն, Դասագիրք, 2007, 588 էջ
4. Եպիֆանով Վ.Ա., Սպորտային բժշկություն, ուսումնական ձեռնարկ, 2006, 336 էջ
5. Պոնոմարենկո Գ.Ն., Ընդհանուր Ֆիզիոթերապիա, Դասագիրք, 2014, 368 էջ
6. Տեղեկություններ ռեաբիլիտացիոն մեթոդների գործնական կիրառության մասին՝ www.medscape.com, www.meduhod.ru/components/reabilitatsia